

ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ

Վրաստանի սուսերամարտի հավաքականը մասնակցում է օգոստոսի 5-ին Բուդապեշտում մեկնարկած սուսերամարտի աշխարհի առաջնությանը: Երկրի ազգային ընտրանին ներկայացված է վեց մարզիկներով: Ընտրյալների թվում է հայազգի սուսերամարտիկ Միքայել Միքայելյանը: Երկրի մարզական դրոշի ներքո հանդես են գալու նաև Եվրոպայի պատանեկան չեմպիոն Սանդրո Բազաձեն, մայրցամաքի առաջնության բրոնզե մեդալակիրներ Բեքա Բազաձեն, Միխեիլ Մարդալեիշվիլին, Սաբա Սուլամանիձեն և Լուկա Ղաղանիձեն:

ՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ

Հայաստանի ներկայացուցիչ Լեւոն Աղասյանը ոսկե մեդալ է նվաճել Իտալիայի Ռիետի քաղաքում անցկացվող աթլետիկայի Եվրոպայի պատանեկան առաջնության եռացատկի մրցումներում:  
Հայ աթլետի 6 փորձերից լավագույնը ստացվել է երրորդը, որում նա գրանցել է 16.01 մետր արդյունք՝ վստահորեն զբաղեցնելով առաջին տեղը: Լեւոն Աղասյանը գրանցել է մրցաշրջանի լավագույն արդյունքը:  
Երկրորդ տեղը գրաված ֆին Կրիստիան Պուլիի արդյունքը 15.88 մետր է, իսկ լավագույն եռյակը եզրափակել է ռուս Վլադիմիր Կոզլովը՝ 15.85 մետր:  
Հիշեցնենք, որ Լեւոն Աղասյանը շարունակեց ժամանակին հայ ճանաչված աթլետներ Իգոր Տեր-Հովհաննիսյանի, Ռոբերտ Էմյանի և ուրիշների էստաֆետը: